# ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.

## 2027 Medicare աստղային վարկանիշներ

ԱՄՆ կառավարության Medicare-ի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն

Kaiser Permanente - H8794

**2027 թ. համար Kaiser Permanente - H8794 ստացել է այս աստղային վարկանիշները Medicare-ից.**

| | |
|---|---|
| **Ընդհանուր աստղային վարկանիշ՝** | ★★★★½ |
| **Առողջապահական ծառայությունների վարկանիշ՝** | ★★★★½ |
| **Դեղորայքային ծառայությունների վարկանիշ՝** | ★★★★★ |

**Ամեն տարի Medicare-ը գնահատում է ծրագրերն՝ օգտագործելով 5-աստղանի վարկանիշային համակարգ:**

### Ինչու են կարեւոր աստղային վարկանիշները

Medicare-ը գնահատում է ծրագրերի առողջապահական և դեղորայքային ծառայությունները:

Սա հնարավորություն է տալիս հեշտությամբ համեմատել ծրագրերը՝ հիմնվելով դրանց որակի և գործունեության վրա:

**Աստղերի քանակը ցույց է տալիս, թե որքան լավ է գործում ծրագիրը:**

| | |
|---|---|
| ★★★★★ | ԳԵՐԱԶԱՆՑ |
| ★★★★☆ | ՄԻՋԻՆԻՑ ԲԱՐՁՐ |
| ★★★☆☆ | ՄԻՋԻՆ |
| ★★☆☆☆ | ՄԻՋԻՆԻՑ ՑԱԾՐ |
| ★☆☆☆☆ | ՎԱՏ |

Աստղային վարկանիշները հիմնված են մի շարք գործոնների վրա, այդ թվում՝

- Ծրագրի անդամների կարծիքը ծրագրի սպասարկման և խնամքի վերաբերյալ
- Ծրագրից դուրս եկած կամ ծրագրում մնացած անդամների քանակը
- Medicare-ի կողմից ծրագրի վերաբերյալ ստացված բողոքների քանակը
- Ծրագրի հետ համագործակցող բժիշկներից և հիվանդանոցներից ստացված տվյալները

Որքան շատ են աստղերը, այնքան լավն է ծրագիրը: Օրինակ՝ անդամները կարող են ստանալ ավելի լավ խնամք և ավելի լավ, արագ հաճախորդների սպասարկում:

**Աստղային վարկանիշների մասին լրացուցիչ տեղեկություններ ստացեք առցանց**
Համեմատեք այս և այլ ծրագրերի աստղային վարկանիշներն առցանց՝
**Medicare.gov/plan-compare**:

**Հարցեր ունե՞ք այս ծրագրի վերաբերյալ:**
Դիմեք Kaiser Permanente շաբաթը 7 օր, ժամը 8:00 a.m.-ից 8:00 p.m.-ը, խաղաղօվկիանոսային ժամանակով, 800-777-1238 (անվճար) կամ 711 (TTY) հեռախոսահամարով: Ընթացիկ անդամներին խնդրում ենք զանգահարել 800-443-0815 (անվճար) կամ 711 (TTY) հեռախոսահամարով: